

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

Բնական գիտություններ

3, 2007

Естественные науки

Աշխարհագրություն

УДК 556-512

Է. Ռ. ԴՈՒՐԳԱՐՅԱՆ

ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՈԵԼԻԵՖԻ ՋԵՎԱԶԱՓԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ուլիեֆի քանակական ցուցանիշները բնութագրող ձևաչափական տարրերի (բարձրություն, լանջերի դիրքադրություն, մակերևույթի թեքություններ, հովտածորակային մասնատվածության խտություն ու խորություն) վերլուծությունը նպաստում է ավելի ճշշտ պատկերացնելու ռելիեֆի առանձնահատկություններն ու զարգացումը՝ հատկապես նորագույն տեկտոնական շարժումների ու դենուրացիոն պրոցեսների բնույթը [1]:

ՀՀ-ի ռելիեֆի առավել աչքի ընկնող ընդհանուր կարգի ձևաչափական առանձնահատկությունը տեղանքի բարձրությունների մեծ տարբերությունն է: Մեր կողմից ուսումնասիրվող տարածքում առկա են բարձրության տարբեր մակարդակներ, որոնք տատանվում են շատ մեծ սահմաններում (390 մ-ից մինչև 3904 մ), ինչը փաստում է, որ Զանգեզուրը ՀՀ-ի առավել մասնատված շրջաններից է: Ըստ հորիզոնական մասնատվածության [2], այսուղ առանձնացվում են չմասնատված (21,0%), բույլ մասնատված (5,3%), միջին (14,1%), ուժեղ (53,5%) և խիստ մասնատված (6,1%) մակերևույթ ունեցող տեղանքներ:

Լեռնային երկների ռելիեֆի ամենաբնորոշ և առավել տարածված տարրը *լեռնալանջերն* են, որոնք տարբերվում են ինչպես իրենց ձևերով, (ուղիղ, աստիճանաձև, գոգավոր, ուռուցիկ, քարափային), այնպես էլ թեքության ու մասնատվածության աստիճաններով և դիրքադրությամբ: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Զանգեզուրի տերիտորիայի 4,5%-ը ունի հյուսիսային, 9,7%-ը՝ հարավային, 8,2%-ը՝ արևելյան, 8,4%-ը արևմտյան դիրքադրություն: Զանգեզուրի լեռնաշղթայի լանջերը գլխավորապես դիրքադրված են դեպի արևելք և արևմուտք (~69,2%), իսկ Մելքոն, Բարգուշատի լեռնաշղթայի լանջերը՝ դեպի հյուսիս-արևելք և հյուսիսմուտք:


Զանգեզուրի լեռնաշղթայի լանջերի դիրքադրությունը իր ազդեցությունն է քողել չորրորդական սառցապատման մասշտաբների և բարձրության վրա: Սառցադաշտերը ավելի մեծ զարգացում են ունեցել լեռների հյուսիսային, հյուսիսարևմտյան լանջերին, որտեղ ձյան սահմանը ավելի ցածր է եղել (2800–2900 մ), քան հարավային լանջերին (3200–3300 մ) [3]:

Ուելիեֆի որոշ առանձնահատկությունները (մորֆոստրուկտուրայի բնույթը, մասնատվածության աստիճանը և այլն) պարզելու համար առավել կարենվոր է տեղանքի հորիզոնական և ուղղաձիգ մասնատվածության վերլուծությունը:

Հորիզոնական մասնատվածություն: Մեր կողմից կազմել է 1:100 000 մասշտաբի Չանգեգուրի տարածքի հորիզոնական մասնատվածության քարտեզ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Սյունիքի բարձրավանդակում մասնատման խտությունը 0,1–0,8 կմ/կմ² է, իսկ Չանգեգուրի և Բարգուշատի լեռներում՝ 0,8–2 կմ/կմ²: Անգեղակորի, Ծորուի, Իշխանասարի, Հայլարի սարահարքի մի մասում՝ 0–0,1 կմ/կմ² է, որտեղ տարածված են անդեզիտները, անդեզիտաղացիտները, դաշիտները, անդեզիտարազալտները, իսկ Տեղի սարահարքում՝ 0,1–0,3 կմ/կմ² է, որտեղ գերակշռություն են անդեզիտները և դաշիտները (նկ. 1):

Թվարկած տեղամասերի միջև հանդիպում են հորիզոնական խիստ մասնատման տարածքներ (1,2–2,0 կմ/կմ²): Այս տեղամասերը սահմանափակված են արևմտութից Իշխանասարի լանջերով, Մեջլումյուրտի զանգվածով, Որոտան գետի վերին հոսանքով, Սիսիանի և Շամբիի գոգավորությունների կենտրոնական մասով և այլն: Գորիսի սարավանդի խիստ մասնատվածությունը պայմանավորված է մեծ տարածում գտած հեշտ տեղատարվող հրաբխային կոտրատումներով (Գորիսի բուրգեր): Գորիս գետի հովտում մասնատման խտությունը հասնում է 1,2–1,5 կմ/կմ², որտեղ տարածված են այլուվիալ-լճային, ջրասացաղաշտային, դելյուվիալ կավերը և գլաքարերը: Վերջիններս գետի ջրերի կողմից հեշտությամբ տեղատարվում են:



Նկ. 1: Սյունիքի մարզի ուելիեֆի հորիզոնական մասնատման ($\text{կմ}/\text{կմ}^2$) սխեմատիկ քարտեզ
(Մ 1:500 000):

պրոցեսներով [4]:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս.

1. որքան իին է լավային հոսքը, այնքան մեծ է մասնատման խտությունը;

2. երիտասարդ լավային հոսքերը օժտված են ֆիլտրացիոն մեծ հատկություններով, որի պատճառով համարյա չեն մասնատվել:

Վերին պլեյստոցենյան լավային հոսքերը Հայլարի սարավանդում ունեն մասնատման փոքր խտություններ՝ $0,2\text{--}0,4 \text{ կմ}/\text{կմ}^2$, Իշխանասարի և Ծղուկի զանգվածներում հասնում են $1,2\text{--}2,0 \text{ կմ}/\text{կմ}^2$ ցուցանիշների: Այտեղ իր դերն ունի նաև լավային ծածկույթի տարբեր աստիճանի ծակոտկենությունը:

Ստորին պլեյստոցենյան հասակի Եռաբլի և Ցորնասարի սարավանդների վրա գտնվող լավային հոսքերը ունեն $0,2\text{--}0,4 \text{ կմ}/\text{կմ}^2$, իսկ Քարքարի, Բազարչայի, Ջարախաչինի հոսքերը՝ $0,8\text{--}1,2 \text{ կմ}/\text{կմ}^2$ մասնատման խտություններ: Այս տվյալները խոսում են այստեղ տարածված ապարների ֆիլտրացիոն հատկությունների մասին, որով կարելի է բացատրել միջլավային և ենթալավային հորիզոնների ստորերկրյա ջրերով սնուցումը:

Ծալքաբեկորային տիպի ռելիեֆում պալեոգենի հասակի հրարիխային ապարներում տիրապետում են $0,8\text{--}2,6 \text{ կմ}/\text{կմ}^2$ ցուցանիշները, Ամուսարի և Սիսկատարի լեռներում՝ մինչև $1,6$, հարավում՝ Շահապոնքում, $1,6\text{--}2,6 \text{ կմ}/\text{կմ}^2$, Բարգուշատի լեռնաշղթայում և նրան հարող շրջաններում՝ $1,2\text{--}1,6 \text{ կմ}/\text{կմ}^2$:


Արամազդ լեռան շրջանում պալեոգոյան հասակի պորֆիրիտներում և Որոտանի կիրճի հարավային լանջերին յուրայի հասակի տուֆոբրեկչիաներում հանդիպում են տեղամասեր $2,4\text{--}2,6 \text{ կմ}/\text{կմ}^2$ ցուցանիշներով: Գեղի գետի միջին հոսանքում տարածված ամուր ապարներում (մոնցոնիտներ, պորֆիրիտներ, կվարցային պորֆիրիտներ, պլազմիկլազմներ) մասնատման խոռոչունը հասնում է $0,1\text{--}0,5 \text{ կմ}/\text{կմ}^2$:

Հարավային Զանգեզորի տարածքում մասնատման խտությունը նույնական փոքր է, արևմտյան շրջաններում $0,1\text{--}0,8 \text{ կմ}/\text{կմ}^2$ է: Տարածված ապարներն են գրանոդիորիտները, գարբոդիորիտները: Մեղրի, Շվանիձոր, Նյուվայի գետերի վերին հոսանքներում մասնատման խտությունը հասնում է $1\text{--}1,7 \text{ կմ}/\text{կմ}^2$, որտեղ տարածված ապարներն են դիորիտները, սինիտները, պորֆիրիտները, գրանոսիտներները, իսկ ստորին հոսանքում տարածված են դելյուվիալ նատվածքները, գլաքարերը: Մասնատման խտությունը Շվանիձոր, Մալե, Նյուվայի, Մեղրի գետերի ստորին հոսանքներում $0,1\text{--}0,4 \text{ կմ}/\text{կմ}^2$ է: Մեղրու լեռնաշղթայի ծայր արևելյան շրջաններում՝ Շավ գետի հովտում, տարածված են գրանոդիորիտները, որտեղ մասնատման խտությունը $1\text{--}1,5 \text{ կմ}/\text{կմ}^2$ է:

Այս բոլոր ցուցանիշները ցույց են տալիս, որ գոյություն ունի սերտ կապ՝ ապարների և մորֆոստրուկտուրաների միջև: Համաձայն դրա՝ ինտենսիվ երօնիայի առավելագույն մասնատվածությունը համընկնում է բարձրացումներին, իսկ նվազագույնը՝ գոգավորություններին [5]: Վերոհիշյալ տեկտոնական խզվածքները ուղեկցվում են իզոգծերի ուղղությունների փոփոխությամբ:

Մասնատման խորություն: Երբ համադրում ենք մեր կազմած մասնատման քարտեզը (նկ.2) գոյություն ունեցող լիթոլոգիական քարտեզի հետ, ստացվում է հետևյալը: Սյունիքի բարձրավանդակը (համեմատած հարևան ծալքաբեկորային տարածքների հետ) բնութագրվում է փոքր ($50\text{--}200 \text{ մ}$) մասնատման խորությամբ: Գորիսի ենթաշրջանի արևելյան մասերում Եռաբլի և Տեղի սարավանդներում, որտեղ տարածված ապարներն են անդեզիտները, անդեզիտաբազալտները, տուֆերը, մասնատման խորությունը ընդամենը $100\text{--}300 \text{ մ}$ է: Բայց և այնպես Սյունիքի բարձրավանդակի առանձին տեղերում, ինչպիսին է Որոտան գետի կիրճը (Վաղիսու գյուղից մինչև Սլիկուլիուշաղի), մեծ չափերի է հասնում, հատկապես Հայիձոր գյուղի տարածքում՝ մինչև 800 մ : Տարածված ապարներն են՝ կրաքարերը, կավերը և մանրաավա-

զը: Մյուս տարածքներից խոր մասնատվածությամբ աշքի են ընկնում Գորիս և Որոտան գետերի վերին մասերը: Այսպես Որոտանի վերին հոսանքում մասնատվածությունը 300–500 մ է, տարածված ապարներից են դաշիտները, լիազարիտային դաշիտները, տուֆերը, պեմզային ավազները, կրաքարերը և կավերը: Գորիս գետի վերին հոսանքում տարածված ապարներից են անդեղիտները, դաշիտները, գլաքարերը, տուֆային կոնգլոմերատները, որտեղ մասնատման խորությունը հասնում է 600–700 մ: Սարահարթի կենտրոնական մասում կա մի մեծ տեղամաս, որտեղ մասնատման խորությունը հասնում է 50–100 մ: Այդ տեղամասն սկսվում է Կարկառ գյուղի շրջակայքից ջրբաժան գծով մինչև Հայլարի սարավանդ, ինչպես նաև տարածվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ՝ ընդգրկելով Անգեղակորի, Ցորճասարի և Եռաբլի սարավանդները: Տարածված են քաղալտները և անդեղիտաքաղալտները: Վերը նշվածից երևում է, որ մասնատման խորությունը փոքր է այստեղ, որտեղ տարածված են ամուր հրաբխային ապարները և ընդհակառակը:



Նկ. 2: Մյունիքի մարզի ռելիեֆի մասնատման խորության (մ) սխեմատիկ քարտեզ (Մ 1:500 000):

ավելի հին է, քան հրաբխային սարավանդում, մասնատման խորությունները խիստ մեծ են: Զանգեզուրի լեռնաշղթայում պալեոգենի և նեոգենի հասակի տուֆարբեկչիաններում և պորֆիրիտներում մասնատման խորությունը կազմում է 100–300 մ: Միսկատարի, Շահապոնքի լեռնազանգվածներում, Միսիանի լեռնանցքում գրանոլիտիտային և գրանոսիտիտային ապարներում մասնատման խորությունը հասնում է 400–500 մ, որոնք քարտեզի վրա (Նկ. 2) պատկերված են փակ ուրվագծերով: Քարգուշատի լեռնաշղթայում ավելի հին հասակի կավճի և յուրայի հասակի կրաքարերում մասնատման խորությունը կազմում է 300–600 մ:

Զանգեզուրի լեռնաշղթայի հարավային կեսը ունի նեղ, ժայռոտ, ատամնավոր զագարներ՝ կազմված գրանիտոիդներից: Զրասացաղաշտային ծագման կողմանաքարարային հզոր կուտակումներ՝ կազմված Կապուտչուի զանգվածի ապարներից, տարածված են Դուգդաղի բարձրալեռնային սարավանդներում: Մասնատման խորությունը հասնում է 300–600 մ: Մեղրու լեռնաշղթան, որն ունի հորիզոնականին մոտ հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ձգվածություն, կազմված է հիմնականում գրանիտոիդներից, մասնատման խորությունը 200–900 մ է:

Մասնատման խորությունը ունի կարևոր նշանակություն բաց և լավատակ մորֆոստրուկտորաների վերլուծության համար: Մասնատման խորությունը ունի կարևոր նշանակություն բաց և լավատակ մորֆոստրուկտորաների վերլուծության համար:

թյան քարտեզը տալիս է ոչ միայն ռելիեֆի մասնատվածության ընդհանուր պատկերը, այլև, որ շատ կարևոր է, հնարավորություն է տալիս, ուրվագծելով լոկալ տեղամասերը, տեսնել, թե ինչպես են ակտիվացել նորագույն տեկտոնական շարժումները [2]: Նման տարածքներում (Խուստովի-Գիրաքաղ, Տաշտուն, Որոտան) իզոգծերը փոխում են իրենց ուղղությունները: Այս բոլորի հետևանքով կարող է փոխվել նաև ջրագրական ցանցի ուղղվածությունը:

Ռելիեֆի մասնատման խորությունը և խոտությունը անբաժանելի են: Լեռնային երկրների ռելիեֆի մակերեսներին մասնատման ինտենսիվությունը հիմնականում կախված է երկրակեղեղի նորագույն տեկտոնական շարժումների տեմպից: Տերիտորիայի բարձրացումնվ (օրինակ, Որոտանի կիրճը) խորանում է էրոզիայի բարձրությունը, որը հանգեցնում է ռելիեֆի մասնատմանը ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղաձիգ ուղղություններով, որոնք ուղիղ համեմատական կապի մեջ են (տես աղյուսակը):

Ապարներ	Մասնատման խոտություն (միջինը), կմ/ կմ^2	Մասնատման խորություն (միջինը), մ
Փոխակերպված ապարներ	0,1–2,0 (1,5)	180–1300 (740)
Ալյուվիալ նատվածքներ	0,1–1,8 (0,5)	100–1040 (570)
Տուֆեր	0–2,2 (1,1)	100–974,2 (537,1)
Կավեր	0–1,6 (0,8)	140–560 (350)
Կրաքարեր, մերգելներ	0,1–1,4 (0,7)	150–980 (565)
Անդեզիտներ	0,1–1,7 (0,9)	80–910,4 (495,2)
Պորֆիրիտներ, տուֆորենէկչիաներ	0–1,7 (0,8)	200–1320 (760)

Մասնատման խոտության և մասնատման խորության միջին տվյալները (0,8–1,1 կմ/ կմ^2 և 537,1–760 մ) մեծ են փոխակերպված ապարների, տուֆերի, տուփորքեկչիաների, պորֆիրիտների համար: Իսկ ալյուվիալ նատվածքների, կավերի, կրաքարերի, մերգելների, անդեզիտների ցուցանիշները ավելի փոքր են:

Փոխակերպված ապարների տարածման շրջաններում ռողի և Մեղրի գետերի ավազաններում (ՀՀ-ում մետամորֆային ապարները ունեն սահմանափակ տարածում), մասնատման խոտության միջին արժեքը 1,5 կմ/ կմ^2 է, իսկ մասնատման խորության միջին արժեքը հասնում է 740 մ-ի: Այս թվերը ցույց են տալիս, որ նշված շրջաններում մեծ է քայլայման բնույթը:

Փոքր ցուցանիշներ ունեն ալյուվիալ նատվածքները՝ մասնատման խորությունը 0,5 կմ/ կմ^2 է, մասնատման խորությունը՝ 570 մ:

Կրաքարերը կազմված են կավի և սիլիկահողի հետ խառնված կալցիոնի կարբոնատից: Քանի որ Զանգեզորի կիմնայական պայմանները չորային են, նպաստավոր չեն ապարների լուծման համար, այդ պատճառով կրաքարերի և մերգելների մասնատման խորության միջին ցուցանիշը 0,7 կմ/ կմ^2 է, իսկ մասնատման խորությունը հասնում է 565 մ-ի:

Անդեզիտները իրենց ցուցանիշներով մոտ են կայուն ապարներին, սակայն նրանց մասնատման խոտությունը (0,9 կմ/ կմ^2) և մասնատման խորությունը (500 մ), որոշ չափով բարձր են նրանցում եղած խոշորահատիկ դաշիտների արագ հողմնահարման պատճառով:

Կավերը նույնապես դասվում են կայուն ապարների շարքին: Մասնատման խոտության միջին ցուցանիշը 0,8 կմ/ կմ^2 է, մասնատման խորության՝ 350 մ է (ամենափոքր տվյալը մեր աղյուսակում):

Եզրակացություն: Այսպիսով, Զանգեզուրի բնատարածքը ունի բարդ լեռնային ռելիեֆ, այդ իսկ պատճառով նրա բնական պրոցեսների ուսումնասիրությունը շատ կարևոր է տարբեր տեսակի շինարարական, մելիորատիվ և բազմաթիվ այլ միջոցառումների պլանավորման և նախագծման գործում: Սակայն, դժբախտաբար, մեր հանրապետությունում շինարարական նախագծումների ժամանակ քիչ ուշադրություն է դարձվում ռելիեֆի առանձնահատկությունների և ռելիեֆառաջացնող պրոցեսների վրա: Փորձը ցույց է տալիս, որ ցանկացած տեսակի շինարարական աշխատանքների իրականացումը առանց գեոմորֆոլոգիական պայմանների գնահատման կարող է հանգեցնել լուրջ կորուստների կամ չկանխատեսված աղետալի հետևանքների:

Միմերալոգիայի, պետրոգլիայի
և երկրաբիմիայի ամբիոն

Ստացվել է 27.11.2006

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Գևորգյան Ֆ.Ս. – ՀՍՍՀ ԳԱ տեղեկագիր: Գիտություններ Երկրի մասին, 1969, № 3:
- Գևօրգյան Փ.Ս., Գագինյան Ռ.Խ. – Молодой научный работник, ЕГУ (естественные науки), 1974, № 1, с. 19.
- Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն: (19 գլ.: Զանգեզուր, խմբ. Դ.Ա. Պողոսյան): ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Եր., 1971:
- Հայկական ՍՍՀ գեոմորֆոլոգիան (խմբ. Ս.Պ. Բալյան): ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Եր., 1986:
- Բալյան Ս.Պ. Структурная геоморфология Армянского нагорья и окаймляющих областей. Ер.: Митк, 1969.

Е. Р. ДУРГАРЯН

МОРФОМЕТРИЧЕСКИЙ АНАЛИЗ РЕЛЬЕФА СЮНИКСКОГО МАРЗА

Резюме

На основе крупномасштабных карт сделана попытка проанализировать морфометрические показатели рельефа Зангезура (гипсометрию, экспозицию склонов, густоту и глубину расчленения поверхности). Доказано, что на эти показатели влияет не только литологический состав пород, но и тектонические подвижки рельефа. Такие исследования имеют важное значение для планирования и проектирования инженерных сооружений.

E. R. DURGARYAN

MORPHOMETRIC INDICATORS OF SYUNIK REGION

Summary

On the basis of large-scale maps there has been done an attempt to analyze morphometric indicators of Zangezur contour (hypometry, exposition of slopes, density and depth of surface breaking-up). It is proved, that not only lithologic composition of rocks, but also tectonic movements of the contour, influence on the amount of morphometric indicators. The study of morphometric indicators of Zangezur contour is of great importance for planning and designing of engineering structures.